


ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՇՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Փորձագիտական վերլուծության առանցքային խնդիրը հանդիսացել է ՀՀ Լոռու մարզի խոշորացված երեք՝ Թումանյան, Ալավերդի, Ախթալա համայնքների պաշտոնական կայքերի ուսումնասիրությունը և վերլուծությունը՝ դրանցում Օրհուսի կոնվենցիայի դրույթներին համապատասխան շրջակա միջավայրի և դրանում նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության առկայության տեսանկյունից:



Թումանյան համայնքի համացանցային կայք <http://www.tumanyancity.am>

Ալավերդի համայնքի համացանցային կայք՝ <http://cmis.alaverdi.am>

Ախթալա համայնքի համացանցային կայք՝ <http://www.akhtala.am/>

• Կատարված աշխատանքներ

«Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ-ի և ծրագրի թիմի հետ մշակվել են հարցաթերթերը ՏԻՄ-ի և համայնքային համացանցային պաշտոնական կայքերից օգտվողների համար:

Ծրագրի մասին տեղեկացվել է վերոնշյալ համայնքներում: Դրանցում իրականացվել են հարցումներ: ՀՀ Լոռու մարզի 3 խոշորացված թիրախային համայնքներն ըստ բնակավայրերի.

Թումանյան համայնք՝ Թումանյան, Մարց, Քարինջ, Լորուտ, Շամուտ, Աթան, Ահնիձոր:

Ալավերդի խոշորացված համայնքային փնջում՝ Ալավերդի, Հաղպատ, Ծաղկաշատ, Աքորի, Կաճաճկուտ, Ջիլիզա:

Ախթալա համայնք՝ Ախթալա, Շամլուղ, Մեծ Այրում և Նեղոց: Ըստ դիտարկման, Ախթալա և Ալավերդի համայնքները խոշորացվել են 2017թ. նոյեմբեր ամսին, իսկ Թումանյան համայնքը 2016-ին:

Հարցաշարը տրամադրվել է ՏԻՄ-երին և թիրախ համայնքների կայքերից օգտվող բնակիչներին: Իրականացվել է նաև գնահատում 0-6 բալային համակարգով, եթե տեղեկատվությունն իսպառ բացակայում է՝ 0 բալ, եթե տեղեկատվությունն առկա է, բայց ամբողջական չէ՝ 1-3 բալ, եթե տեղեկատվությունը հասանելի է և ամբողջականությունը միջինից բարձր է՝ 4-6 բալ:

- Արդյունքում

Ալավերդի, Ախթալա, Թումանյան համայնքների ՏԻՄ-երի կողմից լրացված հարցաթերթի ամփոփ պատկերը հետևյալն է.

Բոլոր երեք համայնքների համացանցային կայքում համայնքի շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ կա որոշ տեղեկատվություն (3 բալ):

Սակայն ՏԻՄ-երի հարցված ներկայացուցիչները պատասխանել են, որ տեղյակ չեն, թե ինչ օրենդրական դրույթներ կան, որոնք պահանջում են շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ հաշվետվությունների հրապարակում:

Ըստ 3 ՏԻՄ-երին ուղղված հարցաթերթերի պատասխանների, դրանց համացանցային կայքերում տեղադրված չեն շրջակա միջավայրի վերաբերյալ Օրենսդրական դրույթներ, նորմեր, կանոններ կամ այլ իրավական փաստաթղթեր:

Ինչ վերաբերում է համայնքի զարգացման ռազմավարական պլանին (այդ թվում շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ կետերին), շրջակա միջավայրի վերաբերյալ ծրագրերին, ֆինանսական հաշվետվություններին կամ նախագծերին, ապա դրանք հասանելի են համայնքային կայքում (4 բալ):

Գոյություն ունեն արդյո՞ք օրենդրական դրույթներ, որոնք պահանջում են, որ վերոնշյալ փաստաթղթերը հասանելի լինի համայնքային կայքի միջոցով հարցին հարցված 3 ՏԻՄ-երը պատասխանել են «Այո»:

Ինչպես շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը, այնպես էլ համապատասխան օրենսդրական դրույթները ՏԻՄ-երը մոտ ապագայում պլանավորում են հասարակության համար հասանելի դարձնել համայնքային կայքի միջոցով:

Հարցման արդյունքում պարզվել է, որ համայնքում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը (ՇՄԱԳ) հասարակության համար համայնքային կայքում հասանելի չեն և հարցվածները վստահ են, որ գոյություն չունեն օրենդրական դրույթներ, որոնք պահանջում են, որ այդ փաստաթղթերը հասանելի լինեն համայնքային կայքի միջոցով: Այնուհանդերձ, ողջունելի է, որ անկախ օրենսդրական պահանջից, պլանավորում են այդ տեղեկատվությունը հասանելի դարձնել հանրության համար համայնքային կայքի միջոցով:

Ի տարբերություն ՇՄԱԳ փաստաթղթերի առկայության, համայնքում պլանավորվող շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող հանրային լուսմների մասին տեղեկատվությունը հիմնականում հասանելի է կայքի միջոցով (4 բալ), քանզի, հարցված ՏԻՄ պատասխանատուների կարծիքով գոյություն ունեն օրենդրական դրույթներ, որոնց համաձայն հանրային լուսմների վերաբերյալ տեղեկատվության տարածումը էլեկտրոնային միջոցներով ՏԻՄ-ի գործառույթն է:

Շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ կամ դրան առնչվող տեղեկատվության տրամադրման հարցումներ ոչ հաճախ, բայց լինում են (3 բալ): Սակայն հարցված բնապահպանական տեղեկատվությանը չտիրապետելու դեպքում, ոչ բոլոր դեպքերում

Է ՏԻՄ-ը տրամադրում համապատասխան հղումներ կամ ուղղորդում հարցման հեղինակին (3 բայ):

ՏԻՄ-երը տեղյակ են, որ օրենդրական դրույթների մասին, որոնք պահանջում են վերոնշյալ տեղեկատվության տրամադրում հարցման հեղինակին:

Հարցված ՏԻՄ-երը նշել են, որ պլանավորում են իրազեկման միջոցառումներ, որոնք կնպաստեն հանրության կողմից բնապահպանական տեղեկատվության պահանջարկի մեծացմանը՝ հանդիպումների, կրթական ծրագրերի միջոցով, երիտասարդների հետ անցկացվող իրազեկման հանդիպումների միջոցով:

«Համայնքի շրջակա միջավայրի վերաբերյալ վերջնական որոշումները հասանելի են արդյոք հանրության համար ձեր համայնքային կայքի միջոցով» հարցին, ստացվել է դրական պատասխան (4 բայ): Հարցված ՏԻՄ-երը վստահ են, որ կան օրենդրական դրույթներ, որոնք պահանջում են, որ նման որոշումները հասանելի լինեն համայնքային կայքի միջոցով:



Ինտերնետը հասանելի է ուսումնասիրված համայնքների բնակչության 40–59% -ին, հիմնականում՝ լարային:

Վերջին 3 տարում՝ սկսած 2015թ.-ից, շրջակա միջավայրի վերաբերյալ կամ դրան առնչվող տեղեկատվությունը ուսումնասիրված կայքերում նվազել է կամ մնացել է նույնը:

Ըստ հարցման արդյունքի համայնքում բնապահպանական տեղեկատվությամբ հիմնական հետաքրքրվում են լրագրողները, համայնքապետարանի մասնագետները, ՀԿ-ները:

Համայնքների պաշտոնական կայքերից օգտվողների շրջանում ևս անցկացվել են հարցումներ, որոնց մասնակցել է ուսումնասիրված համայնքների տարբեր տարիքային խմբերի 40 բնակիչ, այդ թվում՝ 20 բնակիչ Ալավերդի, 10՝ Ախթալա, 10՝ Թումանյան համայնքներից (գրաֆիկ 1):

Գրաֆիկ 1, 2




Փորձ է արվել պահպանել արական և իգական սեռի ներկայացուցիչների հավասար մասնակցությունը հարցմանը (գրաֆիկ 2):

Հարցվածների գնահատականներն ըստ հարցաշարի.


- Հարցման մասնակիցների համայնքի պաշտոնական համացանցային կայք մուտք գործելու հաճախականությունը

Գրաֆիկ 3



- Ի՞նչ տեղեկատվության ակնկալիքով եք մուտ գործում ձեր համայնքի կայք


Գրաֆիկ 4



Համայնքային պաշտոնական համացանցային կայքերի (այսուհետ համայնքային կայք) միջոցով բնապահպանական տեղեկատվության հասանելիությունը հանրության համար

Ձեր համայնքի շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը համայնքային կայքում


Գրաֆիկ 5



Հարցվածների զգալի մասը նշել է, որ համայնքի շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ համայնքային կայքում կա շատ սուղ տեղեկատվություն՝ գնահատելով դրա մակարդակը 6-ից 2 բալ, մյուսները կարծում են, որ այն ընդհանրապես բացակայում է: Հարցվածների 90 %՝ը ցանկություն է հայտնել, որ համայնքային կայքի միջոցով հասանելի լինի համայնքի շրջակա միջավայրի վիճակի մասին տեղեկատվություն:


Նրանց 60%-ը կարծում է, որ այնուհանդերձ կան համապատասխան օրենսդրական դրույթներ, որոնք պահանջում են շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ հաշվետվությունների հրապարակում (գրաֆիկ 6):

Գրաֆիկ 6



Հարցվածները բոլորը նշել են, որ ուսումնասիրվող համայնքային կայքերում բացակայում են շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրական դրույթները, նորմերն, իրավական ակտերն ու այլ փաստաթղթեր: Նրանց 70 %-ը ցանկություն է հայտնել, որ կայքում լինի այդ տեղեկատվությունը կամ համապատասխան հղումներ:


Ինչ վերաբերում է համայնքային կայքերում համայնքի զարգացման պլանի, հատկապես շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված գործողությունների, ծրագրերի ու ֆինանսական հաշվետվությունների առկայությանը համայնքային կայքում, ապա հարցվածների 80 %-ը նշել է, որ այո, նման տեղեկատվություն առկա է, մինչդեռ իսպառ բացակայում են համայնքի տարածքում նախատեսվող այն գործողությունների ՇՄԱԳ փաստաթղթերը, որոնք պահանջված են օրենքով, ինչպես նաև ՇՄ ոլորտին վերաբերող հանրային լուսման մասին տեղեկատվությունը: Նրանց 60%-ը տեղյակ չէ նայն, արդյո՞ք կայքում տեղադրվում են ՇՄ առնչվող վերջնական որոշումները (տես գրաֆիկ 7):




Ինչ վերաբերում է այս հարցերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն պահանջող օրենսդրության առկայությանը, ապա պատկերը հետևյալն է. Հարցվածների 60-90%-ը չգիտի, թե կան, արդյո՞ք, համապատասխան օրենսդրական դրույթներ, որոնք վերաբերում են ՇՄԱԳ փաստաթղթերի, համայնքի տարածքում հանրային լուսմներին առնչվող և շրջակա միջավայրին առնչվող վերջնական որոշումների հասանելիությանը համայնքային կայքի միջոցով (գրաֆիկ 8): Միննույն ժամանակ նրանք ցանկություն են հայտնել, որ անկախ օրենսդրական պահանջից, համայնքի շրջակա միջավայրին առնչվող, առավել ևս նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, վերջնական որոշումները հասանելի լինեն համայնքային կայքի միջոցով:

Հարցվածների 50%-ը ցանկություն են հայտնել, որ կազմակերպվեն իրազեկման միջոցառումներ, որոնք կնպաստեն հանրության կողմից բնապահպանական տեղեկատվության պահանջարկի մեծացմանը համայնքում, հարցվածների մյուս կեսը նման գործողությունների անհրաժեշտությունը չեն տեսնում:

Հարցվածների միայն 5%-ն է շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ կամ դրան առնչվող տեղեկատվության ստացման նպատակով հարցում ուղղել ՏԻՄ-ին, բայց նրանք բոլորն էլ վստահ են, որ նման տեղեկատվության չտիրապետելու դեպքում, ՏԻՄ-ը չի ուղորդում հարցման հեղինակին, թե որ մարմնից կարելի է ստանալ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվությունը:




Գրաֆիկ 9



Այս հարցման միջոցով մենք պարզել ենք նաև, որ հարցվածների 75%-ն օգտագործում է լարային, 20%-ն անլար ինտերնետ և 5%-ն ինտերնետից օգտվում է հեռախոսի միջոցով:

Հարցվածների գնահատմամբ համայնքի կայքում վերջին 3 տարում՝ սկսած 2015թ.-ից, շրջակա միջավայրի վերաբերյալ կամ դրան առնչվող տեղեկատվությունը մնացել է նույնը, կամ նվազել է: Նրանք հիմնականում հետաքրքրված են օդի աղտոտվածիության վերաբերյալ տեղեկատվությամբ ու մարդու առողջության վրա շրջակա միջավայրի վիճակի ազդեցության հարցերով (գրաֆիկ 10):

Գրաֆիկ 10



• **Դիտարկում, հակիրճ վերլուծություն**

Բոլոր բնակավայրերում ամփոփ նկարագրությունը հարցերի վերաբերյալ նմանատիպ է, համընկնում են գրեթե բոլոր պատասխանները: Ցավոք, բոլոր համայնքերի կայքերում բացակայում է բնապահպանական պատշաճ տեղեկատվությունը: Կան շատ քիչ հայտարարություններ, կազմակերպված միջոցառումների մասին տեղեկատվություն, հազվադեպ՝ քննարկումների մասին, ամբողջովին բացակայում են օրենքների կամ կոնվենցիաների վերաբերյալ հղումները: Ընդհանուր առմամբ կայքերում շատ թույլ է անդրադարձը բնապահպանական ոլորտին (միջին գնահատականը՝ 2 բալ):

Կայքերում հստակ երևում է այցելուների թիվը, սակայն, կայքի սպասարկող անձնակազմ չկա, նյութեր տեղադրվում են ադմինիստրատորի կողմից, կամ՝ համայնքապետարանի որևէ աշխատակցի վրա է դրված այդ պարտավորությունը: Տեղադրված են միայն ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները: Գյուղական բնակավայրերում բնակիչների մեծ մասը տեղյակ չէ համայնքապետարանի կայքի գոյությունից, հետևաբար չեն օգտվում: Խոշորացման արդյունքում փոփոխված է միայն Թումանյան համայնքի կայքը, սակայն, այնտեղ ևս չկա բնակավայրերի շրջակա միջավայրի վիճակի և իրավական փաստաթղթերի մասին տեղեկատվությունը:

Համայնքի զարգացման ռազմավարական ծրագրերում շրջակա միջավայրին վերաբերող հատվածները շատ քիչ են և ոչ մասնագիտական մոտեցումներով:

Ընդհանրապես, համայնքների ՏԻՄ-երում չկան բնապահպանական բաժիններ և հաստիքներ, այդ պատճառով, հավանաբար չկան նաև համապատասխան մեթոդներ և մոտեցումներ, պատշաճ չեն տիրապետում նաև ոլորտի ամբողջական տեղեկատվությանը: Կայքերում 80%-ով պահպանված են ՏԻՄ օրենքով սահմանված և կիրառելի պահանջները: Պետք է նշել, որ բոլոր համայնքներում շրջակա միջավայրի կամ բնապահպանական հարցերի վերաբերյալ կայքերում տեղադրվող նյութերը ՏԻՄ-երում ընկալվում է որպես կանաչապատման, շաբաթօրյակի, կոմունալ ծառայությունների կամ «բնապահպանություն» բառը պարունակող քննարկումների վերաբերյալ իրազեկումը: Ակնառու է կայքից օգտվող բնակիչների 90 %-ի հետաքրքրված չլինելը բնապահպանական խնդիրներով և առցաց հարց ուղղելու կարողության ցածր մակարդակը: Կայքերում, քանի որ օրենքով պահանջված չէ ՇՄԱԳ փաստաթղթերի տեղադրումը, այդ պատճառով, դրա մասին հիշատակվում է միայն հայտարարության մեջ: Սա քաղաքացու համար լրացուցիչ խոչընդոտ է կայքի միջոցով համայնքապետարանների թափանցիկ աշխատանքին հետևելու և տեղեկանալու համար, ինչը բերում է անտարբերության և տեղեկացված չլինելուն:

Ամփոփելով՝ նշեմ, որ ուսումնասիրված համայնքների պաշտոնական համացանցային կայքերում բացակայում է բնապահպանական ոլորտի վերաբերյալ տեղեկատվությունը:

• Առաջարկություն

Հաշվի առնելով, որ հնարավոր են բարելավումներ պաշտոնական կայքերի հետ կապված, առաջարկում եմ.

ՏԻՄ պաշտոնական կայքերում ունենալ բացառապես Շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտին վերաբերող բաժին, որտեղ կլինեն ՀՀ և միջազգային իրավական դաշտի մասին, առանձին-առանձին բնակավայրերի վիճակի մասին, թեմատիկ լսումների, քննարկումների մասին, ծրագրերի ու ուսումնասիրությունների մասին, նյութեր, հղումներ, փաստաթղթեր: Սակայն պարզ ու մատչելի, հակիրճ բնութագրական տարբերակով, որպեսզի այն հասկանալի լինի հասարակ բնակչի համար, այլ ոչ թե կազմված լինի մասնագիտական տերմինաբանությամբ և խրթին:

Սույն աշխատանքը իրականացվել է «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Օրհուսի կոնվենցիայի իրականացման մասին իրազեկության մակարդակի բարձրացում Հայաստանում» ծրագրի շրջանակում, որն իրականացվում է «Ա.Դ. Սախարովի մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-նտրամադրած միջոցներով:

Փորձագետ՝ Անուշ Էվոյան